ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «28» Նոյեմբերի 2024թ №2853Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1820-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 2582-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի ««Փիրուզա Աբաջյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» N 1820-Ա հրամանի.

1) Հրամանի վերնագրում և ամբողջ տեքստում «Փիրուզա Աբաջյան» բառերը փոխարինել «Փ. Աբաջյան» բառերով.

2) Հրամանի 1-ին կետում «N 1 (A 1), N 2» բառերը փոխարինել «N 1, N 2 և N 3» բառերով.

3) Հրամանի 5-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ «Սույն հրամանի նկատմամբ կատարման հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:».

4) Հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգի ցանկի վերնագրում «կանոնակարգի» բառը փոխարինել «կանոնակարգերի» բառով.

5) Հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգի ցանկում 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով.

«2. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 607-Ն որոշում»:

2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի ««Փ. Աբաջյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» N 2582-Ա հրամանի.

1) Հրամանի 1-ին կետում «N 2» բառից հետո լրացնել «և N 3» բառերը.

2) Հրամանի 5-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ «Սույն հրամանի նկատմամբ կատարման հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:».

3) Հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգի ցանկի վերնագրում «կանոնակարգի» բառը փոխարինել «կանոնակարգերի» բառով.

4) Հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգի ցանկում 1-ին կետից հետո .լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով. «2. ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 607-Ն որոշում»:

Ստորագրող
ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
2102870448

2024-12-19 10:22:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ